

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԻՍԱԿՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՍԼԱՎԻԿԻ

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Լաուրա Թոռնիկի Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների դոկտոր,
դոցենտ **Ժաննա Հարությունի Պայլոզյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու
դոցենտ **Արմինե Աղվանի Բաղդասարյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. ապրիլի 16-ին, ժամը 12:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ.-ի մարտի 13-ին:

**«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝**



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը Մոլորակի մարդկության կայուն զարգացման հեռանկարներն ու գերակայությունները մեծ չափով պայմանավորված են էկոլոգիական հիմնախնդիրների բացահայտմամբ և էկոլոգիական կրթության ու դաստիարակության համակարգի զարգացմամբ:

Հազարամյակի մարտահրավերների համատեքստում այսօր գլոբալ հիմնախնդիր են դարձել մարդու՝ օրավուր աճող պահանջումների ու բնական ռեսուրսների համաչափության պահպանումը, էկոլոգիական էթիկայի ու էկոլոգիական իրավունքի հիմնադրույթների սահմանումը, էկոլոգիական կրթության սոցիալ-մանկավարժական տեսանկյունների հստակեցումը: Ուստի, ներկայումս կենսական կարևոր նշանակություն ունեն աճող սերնդի, էկոլոգիական մշակույթի և գիտակցության զարգացման, էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հարցերը:

Հանրակրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում խորապես հաշվի են առնվում սովորողների անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի ապահովման, շրջակա միջավայրում բնականոն կենսագործունեության պատրաստության պահանջները: Դա ազգային, տարածաշրջանային, գլոբալ մակարդակներ ընդգրկող հիմնախնդիր է, որը կարող է լուծվել միայն էկոլոգիական կրթության շրջանակներում:

Այս տեսանկյունից էկոլոգիական աշխարհայացքի սոցիալական կրողներից են համարվում հանրակրթական դպրոցի սովորողները, այսինքն՝ նրանք, ովքեր դառնալու են ապագա հասարակության լիիրավ անդամներ և քաղաքակրթության առաջընթացը ապահովողներ: Այլ կերպ ասած, էկոտեխնածին քաղաքակրթության ապագան կախված է ոչ միայն մարդկային գործունեության մակարդակից, այլև նրանից, թե ովքեր են որոշելու Երկիր մոլորակի ապագան և ինչ սոցիալական ինստիտուտներ են ուղղորդելու հասարակության զարգացումը: Ուստի, սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը պետք է ուղղված լինի էկոլոգիապես կարողունակ մտածողների, կառավարման կարողունակություն ունեցող մասնագետների պատրաստմանը՝ բնապահպանական ճգնաժամերի և աղետների ռիսկերի նվազեցման ու կանխարգելման աշխատանքների իրականացման նպատակով:

Այսպիսով՝ ժամանակակից աշխարհում անհետաձգելի լուծում պահանջող առաջնային խնդիր է Երկրի վրա մարդու անխաթար կենսագործունեության ապահովումը, այդ հիմնախնդրի գիտակցումն ու կրթադաստիարակչական նպատակաուղղված գործընթացում գիտականորեն հիմնավորված ուղիների նախանշումը, որոնք և պայմանավորում են էկոլոգիական կրթության նոր հայեցակարգի, արժեքանորմատիվային նոր հարաբերությունների, սովորողների էկոլոգիական գիտակցության, աշխարհայացքի և մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը:

Անձի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հիմնադրույթները բխում են էկոլոգիական կրթության ընդհանուր նպատակներից և անձի էկոլոգիական գիտակցության ձևավորման սկզբունքներից:

Այնուհանդերձ, մեր դիտարկումները, հանրակրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծությունը ցույց են տալիս, որ տեսական և գործնական մակարդակներում բավականաչափ նպատակային չի իրականանում էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, հստակ նախանշված չեն այդ առարկայի նպատակը, բովանդակությունը, կառուցվածքը, սկզբունքները, գործառույթները, մեթոդական և դիդակտիկական տեսանկյունները:

Չնայած էկոլոգիական բովանդակությամբ հիմնադրույթներն արտացոլված են նաև ուսումնական տարբեր դասընթացներում («Ես և շրջակա աշխարհը», բնագիտություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, գրականություն և այլն), այնուամենայնիվ սովորողների էկոլոգիական գիտելիքները, համապատասխանաբար նաև էկոլոգիական աշխարհայացքը, գիտակցությունը, մշակույթը, էթիկան համակարգված ձևավորելու համար անհրաժեշտություն կա գիտականորեն, մեթոդական և տեխնոլոգիական տեսանկյուններից մշակել այդ գործընթացի արդյունավետ ձևավորման մանկավարժական մոդելը, ինչպես նաև հիմնավորել «էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» առանձին դասընթացի ուսումնասիրումը:

Հիմնախնդրի արդիականությունը և տեսագործնական կարևոր նշանակությունը պայմանավորեցին մեր հետազոտության թեմայի ընտրությունը՝ **«Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքները»:**

Հետազոտության նպատակը սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսական-մեթոդաբանական և գիտագործնական հիմունքների ու դրա իրացման մանկավարժական մոդելի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցի բնագիտական առարկաների ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքները և դրա իրացման մանկավարժական մոդելն է:

Հետազոտության գիտական վարկածն այն է, որ սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումն արդյունավետ կիրականանա, եթե՝

1.Ուսումնասիրվեն և էկոլոգիական ժամանակակից մարտահրավերների տեսանկյունից բնութագրվեն հիմնախնդրին վերաբերող «էկոլոգիական աշխարհայացք», «էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական մշակույթ» հիմնական հասկացությունների էությունը:

2.Բացահայտվեն և բնութագրվեն սովորողների էկոլոգիական աշխարհայացքի բաղադրատարրերը և դրանց ձևավորման վրա ազդող գործոնները:

3.Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործընթացը հենվի ուսուցման և դաստիարակության փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների վրա, այդ գործընթացում խորապես հաշվի առնվեն տարածաշրջանային գործոնները և էկոլոգիական ուղղվածության, երկրագիտական, մշակութաբանական, արժեքաբանական, կրթության թվայնացման, կարողունակությունների վրա հիմնված ժամանակակից մանկավարժական մոտեցումները:

4.Մշակվեն սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հայեցակարգը և ռազմավարությունները:

5.Մշակվի և մանկավարժական հետազոտությամբ հիմնավորվի սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելը, որը կներառի է այդ գործընթացի նպատակը, հիմնական սկզբունքներն ու բովանդակությունը, ձևերը, միջոցները, փոխներգործուն մեթոդները և մանկավարժական տեխնոլոգիաները և ակնկալվող վերջնարդյունքները:

6.Բացահայտվեն և առաջադրվեն սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելի արդյունավետ գործառնության մանկավարժական պայմանները:

7.Մշակվի սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված

«Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի ծրագիր:

Հետազոտության նպատակի և առաջադրված գիտական վարկածի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Հիմնախնդիրն նվիրված գրականության և հայեցակարգերի վերլուծության հիման վրա բացահայտել և բնութագրել «Էկոլոգիական աշխարհայացք», «Էկոլոգիական գիտակցություն», «Էկոլոգիական մշակույթ» առանցքային հասակացությունները, էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մեթոդաբանական-հայեցակարգային հիմքերը, բովանդակությունն ու սկզբունքները:

2. Հետազոտել հանրակրթական դպրոցում բնագիտական կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը, տեսականորեն հիմնավորել «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի՝ որպես ինքնուրույն առարկա ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

3. Ուսումնասիրել սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության առկա մակարդակը, մշակել նրա չափանիշներն ու ցուցանիշները:

4. Մշակել սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հայեցակարգը և ռազմավարությունները:

5. Մշակել և հետազոտությամբ հիմնավորել սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելը, որը ներառում է այդ գործընթացի նպատակը, հիմնական սկզբունքները, բովանդակությունը, ձևերը, միջոցները, մեթոդները, տեխնոլոգիաները, դրանց գործառնության արդյունավետության մանկավարժական պայմանները, ակնկալվող վերջնարդյունքները:

6. Բացահայտել և առաջադրել սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելի արդյունավետ գործառնության մանկավարժական պայմանները:

7. Մշակել և հետազոտությամբ հիմնավորել սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի ծրագիրը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- էկոլոգիական կրթության հիմնադրույթները, ՀՀ պետական կրթական չափորոշիչը, «Էկոլոգիական աշխարհայացք», «Էկոլոգիական գիտակցություն», «Էկոլոգիական մշակույթ» հասակացությունների բնութագրմանը նվիրված փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, մասնագիտական գրականությունը և հայեցակարգերը (Տ.Ա.Ակիմովա, Ս.Ն.Զախլեբնի, Ա.Մ.Բուրավսկի, Վ.Լ.Գլազաչև, Վ.Ի.Մեդվեդև, Յու.Պ.Շարկով, Բ.Տ.Լիխաչյով, Վ.Ի.Վերնադսկի, Օ.Ն.Պոնոմարյովա, Ա.Մ.Կոչերգին, Յու.Գ.Մարկով, Ի.Տ.Սուրավեգինա, Լ.Թ.Ասատրյան, Մ.Ա.Ասատրյան, Հ.Մ.Ազիզյան, Ա.Ա.Աջամովյան, Ն.Զ.Կարապետյան, Ա.Ա.Բաղդասարյան, Փ.Ա.Սարգսյան և այլք), հանրակրթության համակարգում բնագիտական կրթության մեթոդաբանական մոտեցումները (Ի.Դ. Զվերև, Ա.Դ.Ուրսուլ, Ս.Վ.Ալեքսեև, Մ.Վ.Գուսև, Գ.Ա.Դավիդով, Ն.Ն.Մոխսեև, Տ.Վ.Թանգամյան և այլք),

- անձի գիտական աշխարհայացքի և այդ համատեքստում էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանը նվիրված տեսությունները (Ն.Ն.Մոխսեև, Ն.Ֆ.Ռեյմերս, Ա.Ն.Ավերյանով, Տ.Պ.Գերասիմովա, Ա.Մ.Կոչերգին, Յու.Գ.Մարկով, Վ.Պ. Պոլեշչուկ և այլք),

- ուսուցման տեխնոլոգիաներին նվիրված տեսությունները (Ն.Ն. Օգուրցով, Ի.Դ. Զվերև, Մ.Վ.Կլարին, Գ.Կ. Սելեվկո, Վ.Ա.Բուխվալով, Ս.Ե.Պոկրովսկայա, Ե.Ս.Պոլատ, Մ.Պերսիլալ, Գ.Էլլինգտոն, Պ.Միտչել, Մ.Կլարկ, Մ.Ա. Մկրտչյան, Հ.Հ.Պետրոսյան, Վ. Զ.

Մկրտչյան, Ա.Յու. Հովսեփյան և այլք):

Հետազոտության ընթացքում կիրառվել են **տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝**

- **Տեսական՝** հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծություն, մանկավարժական մոդելավորում,

- **էմպիրիկ մեթոդներ՝** դիտում, զրույց, անկետավորում, հարցազրույց, հետազոտության տվյալների վերլուծություն, դրանց մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազան են հանդիսացել Երևանի 190, 191, Փարաքարի և Շիրակի մարզի Զրափի գյուղի միջնակարգ դպրոցները:

Առաջին փուլում (2007-2009) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված գրականությունը, որոշվել է հետազոտության հիմնախնդիրը, սահմանվել է նպատակը, առաջադրվել են գիտական վարկածը և հետազոտության խնդիրները, հստակեցվել են հետազոտության հիմնական ուղղությունները, մշակվել է հետազոտության մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2009-2010) ձևավորվել են հետազոտական խմբերը, ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, անցկացվել է հաստատող հետազոտություն, վերլուծվել են ստացված տվյալները, նախանշվել են հետազոտության հետագա ուղղությունները:

Երրորդ փուլում (2011-2012) մշակվել է սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելը, անցկացվել է ձևավորող հետազոտություն, մշակվել, համեմատվել, համակարգվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, ուղիներ են նշվել դրանց գործնականում կիրառման համար:

Չորրորդ փուլում (2023-2024) մանկավարժական նոր մոտեցումների, Նոր մանկավարժության դրույթների և պետական նոր չափորոշիչների համատեքստում վերանայվել են մեր հայեցակարգային մոտեցումները և սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելի բովանդակությունը, մշակվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի ծրագիրը:

Հետազոտության գիտական նորույթը.

1.Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ճշգրտվել է «էկոլոգիական աշխարհայացք» հասկացությունը, հիմնավորվել է էկոլոգիական կրթության համակարգում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման անհրաժեշտությունը:

2.Մշակվել են էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հայեցակարգը և ռազմավարությունները:

3.Մշակվել և հետազոտությամբ հիմնավորվել են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործական հիմունքները և դրա իրացման մանկավարժական մոդելը, որը ներառում է այդ գործընթացի նպատակը, հիմնական սկզբունքները, բովանդակությունը, ձևերը, միջոցները, մեթոդները և մանկավարժական տեխնոլոգիաները և ակնկալվող վերջնարդյունքները:

4.Առաջադրվել և հիմնավորվել են դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման արդյունավետության մանկավարժական պայմանները:

5.Մշակվել է սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի այլընտրանքային

ծրագիրը:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1.Վերլուծվել և տեսականորեն հիմնավորվել են հետազոտության հիմնախնդրի շրջանակներում առանցքային հասկացությունները, համակարգվել են «Էկոլոգիական աշխարհայացք» հասկացության էության մեկնաբանման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու հիմնադրույթները:

2.Տեսականորեն հիմնավորվել են հանրակրթական բնագավառում, հատկապես ավագ դպրոցում «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի բովանդակության ձևավորման հիմնական սկզբունքները, առանցքային գաղափարները, ուղղությունները, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը, ուսուցման մեթոդներն ու միջոցները, ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխներգործության ձևերը:

3.Առանձնացվել և սահմանվել են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի **ճանաչողական** (մարդու բնության, շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման), **արժեքային-գնահատողական** (բնության նկատմամբ հուզական ապրումների, զգայական ընկալումների և արժեքային-գնահատողական վերաբերմունքի ձևավորում), **վարքային-խնայողական** բաղադրատարրերը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքները, ուսումնամեթոդական նյութերը, մշակված էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելը կարող են ընդհանուր առմամբ օգտակար լինել «ԲՏՃՄ» ուսումնական բնագավառի առարկաների դասավանդման, էկոլոգիական բովանդակությամբ թեմատիկ ծրագրերի մշակման, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման և որակավորման գործընթացներում, ինչպես նաև էկոլոգիական ուղղվածությամբ հասարակական տարբեր կազմակերպությունների գործունեության ընթացքում:

Պաշտպանության են ներկայացված հետևյալ դրույթները.

1.Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը էկոլոգիական կրթության գերակա նպատակն է: Էկոլոգիական աշխարհայացքը ձևավորվում է իբրև շրջակա միջավայրի հետ մարդու փոխազդեցության հետևանք, կազմում է շրջակա աշխարհում մարդու բնականոն կենսագործունեության հիմքը և նրանում մարդու տեղի, «մարդ-հասարակություն-շրջակա միջավայր» փոխադարձ կապերի վերաբերյալ ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների, դիրքորոշումների, էկոխնայողական վարքագծի համակարգը, որոնք դրսևորվում են շրջակա միջավայրում սովորողների գիտակցված, արժեքային գործունեության մեջ:

2.Հանրակրթական դպրոցում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսությունն ու պրակտիկան ներառում են **ճանաչողական** (շրջակա միջավայրի ճանաչողության, մարդ-բնություն փոխազդեցության վերաբերյալ գիտելիքներ), **արժեքային-գնահատողական** (բնության նկատմամբ հուզական ապրումների, զգայական ընկալումների և արժեքային-գնահատողական վերաբերմունքի ձևավորումը), **վարքային-խնայողական** (գիտելիքները, կարողություններն ու հմտությունները նպատակային կիրառելու պահանջմունքների ձևավորվածությունը, շրջակա միջավայրում նպատակահարմար գործունեության պատրաստակամությունը և դրա համար պատասխանատվությունը) **բաղադրատարրերը:**

3.Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանը նպաստում են ոչ միայն «ԲՏՃՄ» ուսումնական բնագավառի, այլև հանրակրթական այլ առարկաներ: Այդ

գործընթացի արդյունավետությունը ապահովում են անձնակենտրոն կրթության սկզբունքների կիրառումը, կրթական զարգացնող միջավայրի ձևավորումը, ուսուցման գործընթացի սուբյեկտների երկխոսությունը և փոխներգործությունը, կրթական գործընթացում նորագույն մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների նպատակաուղղված կիրառումը, կրթության բովանդակության մեջ տարածաշրջանային գործոնի հաշվառումը, ուսումնական և արտաուսումնական աշխատանքի ձևերի հմուտ զուգակցումը:

4.Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված մանկավարժական մոդելը, որը ներառում է այդ գործընթացի նպատակը, խնդիրները, բովանդակությունը, առանձնահատկությունները, սկզբունքները, մանկավարժական պայմանները, մեթոդները, ձևերը, միջոցները, տեխնոլոգիաները, ձևավորվածության մակարդակները և ակնկալվող վերջնարդյունքներն էականորեն նպաստում են սովորողների էկոլոգիական գիտակցության, բնապահպանական կարողությունների, էկոխնայողական վարքագծի և արժեհամակարգի ձևավորմանը, տարածաշրջանային խնդիրների լուծմանը:

5.Համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրները, Երկիր մոլորակի էկոլոգիական վիճակի վատթարացումն ու մարդկության հետագա ճակատագրի մտահոգությունն օրախնդիր են դարձրել հանրակրթության բնագավառում, մասնավորապես ավագ դպրոցի բոլոր հոսքերում **«էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ»** առանձին առարկայի ուսումնասիրման հրամայականը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հիմնախնդրի շրջանակներում փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական ու մասնագիտական գրականության, տեսությունների ու հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության տեսական-մեթոդաբանական բազայով, հետազոտության նպատակին, առարկային ու խնդիրներին համարժեք ընտրված մեթոդներով, տեսական արդի նվաճումների և մշակված հայեցակարգերի լայն կիրառմամբ, տեսական հետազոտության հիմնավորմամբ, հետազոտության սովյալների վերլուծությամբ, ամփոփմամբ և հիմնավորված եզրահանգումներով:

Հետազոտության փորձաքննությունը իրականացվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի նիստերում, հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում, ինչպես նաև ատենախոսության թեմայի շրջանակներում հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված 132 կտոր գրականությունից և հավելվածից: Այն ներառում է՝ 1 գծապատկեր, 8 աղյուսակ, 7 տրամագիր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 150 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գիտատեսական հիմնավորումը»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«էկոլոգիական աշխարհայացք»** հասկացության փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական մեկնաբանումը, դիտարկվել են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների մեթոդաբանական և հայեցակարգային մոտեցումները և «էկոլոգիական աշխարհայացք» հասկացության հետ անմիջականորեն առնչակցվող **«էկոլոգիական մշակույթ»**, **«էկոլոգիական գիտակցություն»**, **«էկոլոգիական դաստիարակություն»**, **«էկոլոգիական մտածելակերպ»**, **«էկոլոգիական կրթություն»** հասկացությունները:

Նշվում է, որ առանձին ուսումնական առարկաների, մասնավորապես էկոլոգիական կրթության շրջանակներում աշխարհայացքի ձևավորման մեթոդաբանական տեսանկյունները լայնորեն արտացոլվել են Է.Ի.Մոնոսզոնի, Տ.Պ.Գերասիմովայի, Մ.Կ.Կովալևսկայայի, Յու.Վ.Օլեյնիկովի, Գ.Ա.Դավիդովայի, Ա.Լ.Ժոխովի, Ն.Գ.Օգուրցովի, Լ.Թ.Ասատրյանի աշխատություններում:

Հիմնախնդրի շրջանակներում մեր իրականացրած վերլուծությունները թույլ տվեցին որոշելու աշխարհայացքի էական կողմերը՝ այն հատկանիշները, որոնք բնորոշ են մարդուն և ձևավորվում ու զարգանում են կենսական կարևոր որոշումների կայացման և դիրքորոշումների կայունացման գործընթացում, ինչպես նաև բնութագրելու այն ամբողջական գործընթացը, որն ընդգրկում է անձի բոլոր ոլորտները՝ իմացական, հուզական, արժեքային, դրդապատճառային-պահանջմունքային և այլն:

Տեսական հետազոտության արդյունքում դիտարկված «էկոլոգիական աշխարհայացք» հասկացության բոլոր սահմանումների վերլուծությունը բերեց մեզ այն գիտական համոզմանը, որ դրանցում էկոլոգիական աշխարհայացքը դիտարկվում է որպես անձի կողմից էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների անմիջական յուրացման արդյունքում ձևավորված ինքնուրույն հասկացություն, որը գիտակցության մեջ ձևավորում է շրջապատող միջավայրի համընդհանուր պատկերը՝ որպես «մարդ-բնություն» փոխադարձ կապերի ամբողջական համակարգ: Էկոլոգիական աշխարհայացքը կարելի է դիտարկել նաև որպես ընդհանուր աշխարհայացքի մեջ էկոլոգիական գաղափարների, հասկացությունների, մոտեցումների, սահմանումների ներթափանցում:

Այսպիսով՝ էկոլոգիական աշխարհայացքը մարդկության կենսամիջավայրի պահպանության կենսական անհրաժեշտության խոր գիտակցումն է, իմացական, հուզական-արժեքային և վարքային-խնայողական բաղադրատարրերի համակարգված միասնությունը, անձի իմացության և կենսագործունեության միասնական զարգացման ռազմավարական ուղղությունների որոշման և իրականացման հիմնական բնութագրիչը:

Առանձնացվել և բնութագրվել են էկոլոգիական աշխարհայացքի կառուցվածքային բաղադրատարրերը՝ ճանաչողական, արժեքային-գնահատողական, վարքային-խնայողական:

Տեսական հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը բազմամակարդակ գործընթաց է, որում էական նշանակություն ունեն հանրակրթական դպրոցում «էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» առանձին դասընթացի դերի ու նշանակության իմաստավորումն ու տեղի ճշգրտումը: Էկոլոգիական աշխարհայացքի նպատակաուղղված զարգացման գործում առաջնային դեր է վերապահված հանրակրթական ուսումնական հաստատություններին:

Երկրորդ ենթագլխում՝ «Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմնավորումը», բնութագրվել են էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման փուլերը, հանրակրթական դպրոցում ուսումնական տարբեր բնագավառների, մասնավորապես բնագիտական առարկաների ուսուցման արդյունքում յուրացված էկոլոգիական գիտելիքները, կարողությունները, հմտությունները, ինչպես նաև տեղեկատվական տարբեր աղբյուրներից ձեռք բերված տեղեկատվությունը /այդ թվում էլեկտրոնային/, որոնք կազմում են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի հիմքը:

Մշակվել են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման հայեցակարգն ու ռազմավարությունները՝ ըստ ժամանակակից մանկավարժական և էկոլոգիական կրթության մոտեցումների:

Երրորդ ենթագլխում՝ «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի ձևավորման սկզբունքները, գաղափարները և ուսումնական նպատակները, դիտարկվել, բնութագրվել և հիմնավորվել են էկոլոգիական անընդմեջ կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, էկոլոգիական անընդմեջ կրթության մակարդակները:

Ներկայացվել է հետազոտության արդյունքում բացահայտված այն փաստը, որ ներկայումս ՀՀ-ում հանրակրթական դպրոցի հենքային և տարբերակված ուսումնական պլաններում **«Էկոլոգիայի հիմունքներ»** առանձին դասընթաց ներմուծված չէ: Էկոլոգիայի՝ իբրև գիտության, գիտական հիմունքները որոշ չափով ուսումնասիրվում են հիմնական և ավագ դպրոցներում «Կենսաբանություն» ուսումնական դասընթացի շրջանակներում:

Ելնելով վերոբերյալից հիմնավորվել է, որ հանրակրթական դպրոցի տարբեր աստիճանների հենքային ուսումնական պլանների դպրոցական բաղադրիչներում անհրաժեշտ է ներմուծել **«Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ»** դասընթացը և դրա շրջանակներում կիրառել համապատասխան մանկավարժական ներգործություն՝ ուղղված դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանը:

Անդրադարձ է կատարվել այն հիմնական գաղափարներին, խնդիրներին ու նպատակներին, որոնք պետք է ընկած լինեն վերոնշյալ դասընթացի հիմքում:

Նշվում է, որ **«Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ»** դասընթացի բովանդակությունը պետք է ներառի էկոլոգիային վերաբերող գիտական ժամանակակից մոտեցումները, համաաշխարհային գլոբալ իրողությունները և դրանց համատեքստում ընթացող սոցիալ-քաղաքական, արժեքային, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական տեղաշարժերը, բնական ու հասարակական գործընթացները, իսկ դասընթացի բովանդակության հիմքը պետք է կազմեն իմացական, նորմատիվային և գործնական բաղադրիչները:

Ներկայացված են դասընթացի թեմատիկ ուղղությունները և նրա բովանդակության հիմքը կազմող գիտական հասկացությունները:

Հիմնավորվում է, որ **«Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ»** դասընթացի բովանդակությունը պետք է հիմնվի մարդասիրական, անձնակողմնորոշված, արժեքանական, բնահարմարության, մշակութահարմարության, տարածաշրջանային գործոնների հաշվառման, հանրակրթության բոլոր աստիճանների շարունակականության և սահուն անցման, միջառարկայական կապերի ակտիվացման, էկոկենտրոն, անձի ազատ զարգացման, սիներգետիկայի և այլ սկզբունքների ու մոտեցումների, ինչպես նաև Նոր մանկավարժության դրույթների և 21-րդ դարի հմտությունների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելը և դրա արդյունավետության ապահովման մանկավարժական պայմանները» գլխի առաջին ենթագլխում՝ «Էկոլոգիական կրթության իրականացման մեթոդական ապահովումը», բնութագրված են առաջարկվող դասընթացի բովանդակության հիմքը կազմող գիտական հասկացությունները և մշակված էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական մոդելի կառուցվածքային բաղադրիչները՝ սկզբունքները, ժամանակակից փոխներգործուն մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցներն ու ձևերը:

Բնութագրված են ուսուցման մեթոդների կիրառման էությունը և դրանց զարգացնող գործառույթները: Առանձնահատուկ կարևորվել են այն փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք սովորողների էկոլոգիական աշխարհայացքը զարգացնող մեծ ներուժ ունեն և էականորեն նպաստում են սովորողների աշխարհընկալմանը, մտահորիզոնի ընդլայնմանը, քննադատական մտածողության, հաղորդակցական, երկխոսական, համագործակցային կարողունակությունների զարգացմանը, էկոլոգիական աշխարհայացքի, իմացական-ճանաչողական դրդապատճառների ձևավորմանը, սոցիալականացմանը, փոխադարձ աջակցությանը:

Ներկայացված է համագործակցային-նախագծային աշխատանքի կազմակերպման նմուշօրինակ՝ «խմբային հետազոտություն» մեթոդի կիրառմամբ:

Ներկայացված և բնութագրված են էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործոնները և մանկավարժական պայմանները» ներկայացված և բնութագրված են հետազոտության ընթացքում բացահայտված սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործոնները և մանկավարժական պայմանները:

Հանրակրթական դպրոցում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման առաջնային գործոններն են՝

- Էկոլոգիական կրթության առաջնային նպատակների սահմանումը, այդ գործընթացի տեսական և գործնական կողմերի մշակումը, մեթոդական համակարգի առանձնահատկությունների որոշումը բնագիտական առարկաների ուսուցման մեթոդների, միջոցների, ձևերի, եղանակների ընդհանուր համակարգում:
- Յուրացված գիտելիքները գործնականում կիրառելու համար ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում համապատասխան մանկավարժական պայմանների ստեղծումը:
- Դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործոն է դպրոցականների մասնագիտական կողմնորոշումների ձևավորման ընդհանուր խնդիրների սահմանումը:
- Դպրոցի և մասնագիտական բուհերի միջև համագործակցությունն ու կրթական ծրագրերի փոխհամաձայնեցումը: Այսօրինակ փոխգործակցությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով տարածաշրջանային գործոնները և էկոլոգիական կրթության հեռանկարային զարգացումները:
- Տեղային, տարածաշրջանային, գլոբալ գործոնների և էկոլոգիական կրթության հեռանկարային զարգացումների հաշվառումը:

Հիմնախնդրի վերաբերյալ դիտարկումները և հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը հնարավորություն տվեց որոշարկելու հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մանկավարժական պայմանները: Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը կարող է արդյունավետ իրականանալ եթե.

- արժևորվի «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի դերը, սահմանվի բովանդակությունը, նպատակները, խնդիրները, տեսական-մեթոդաբանական առանձնահատկությունները:
- Ձևավորվի կրթական զարգացնող, երկխոսական միջավայր և ապահովվի «սուբյեկտ-սուբյեկտ» փոխներգործություն:
- Ակտիվացվի սովորողների՝ շրջակա միջավայրի փորձի ընդլայնմանն ուղղված գործունեությունը, որը ներառում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված

արշավներին մասնակցությունը, սոցիո-էկոլոգիական նախագծերի կատարումը և պաշտպանությունը:

- Կիրառվեն ուսուցման և դաստիարակության փոխներգործուն մեթոդներ, միջոցներ, ձևեր, տեխնոլոգիաներ:
- «ԲՏՃՄ» ուսումնական բնագավառի առարկաների բովանդակության մեջ հաշվառվեն տեղական, տարածաշրջանային, համամոլորակային գործոնները, օգտագործվի ինտեգրվող առարկաների ներուժը, նպատակային համադրվեն սովորողների գործունեության ուսումնական և արտաուսումնական ձևերը:
- Հաշվառվեն սովորողների տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, պահանջմունքները, դրդապատճառները, էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունները:
- Ապահովվի դասավանդող ուսուցիչների մասնագիտական կարողունակությունների ձևավորվածությունը և որակավորման բարձր մակարդակը:
- Բացահայտվեն ու բնութագրվեն սովորողների էկոլոգիական աշխարհայացքի բաղադրատարրերի զարգացման առանձնահատկությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Հետազոտական աշխատանքների կազմակերպման մեթոդիկական և արդյունքների վերլուծություն», ներկայացվել են հետազոտության արդյունքները:

Հետազոտական աշխատանքների նպատակն է եղել հիմնավորել դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման ուղղությամբ մեր կողմից առաջարկվող մանկավարժական մոդելի արդյունավետությունը:

Ներկայացված են հետազոտության ընթացքում մշակված հանրակրթական դպրոցում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության չափանիշները:

Հետազոտությանը մասնակցել են 30 ուսուցիչ և հանրակրթական դպրոցի 400 սովորող:

Ուսուցիչների շրջանում իրականացված անկետավորման արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ կենսաբանության դասընթացում էկոլոգիային հատկացված բաժնի ժամանաքանակը ուսուցիչները գնահատում են ոչ բավարար:

Հետազոտության ընթացքում իրականացվել է էկոլոգիական աշխարհայացքի՝ ըստ առանձին բաղադրատարրերի ձևավորվածության մակարդակների վերլուծություն: Սովորողներին առաջարկված հարցաթերթիկի պատասխանների վերլուծությունը թույլ է տալիս բնութագրել էկոլոգիական աշխարհայացքի առանձին բաղադրատարրերի ձևավորվածության մակարդակները:


Ներկայացված են հետազոտության գործընթացում ընդգրկված սովորողների մասնակցության ցուցանիշները հետազոտության սկզբում և վերջում: Ստացված արդյունքները վերլուծվել են ըստ ճանաչողական, արժեքային-գնահատողական և վարքային-խնայողական բաղադրատարրերի:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտության հաստատող փուլում սովորողների մեջ գերակշռում է ճանաչողական բաղադրատարրը, քիչ է զարգացած վարքային-խնայողական բաղադրատարրը, ավելի թույլ է արտահայտված արժեքային-գնահատողական բաղադրատարրը:

Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները որոշելու համար առանձնացրել և դիտարկել ենք **բարձր, միջին, ցածր** մակարդակները և դրանց **ձևավորվածության ցուցանիշները (աղյուսակ 2):**

Հետազոտական և համեմատական խմբերում ընդգրկված սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները հետազոտության հաստատող փուլում

Մակարդակներ	Հետազոտական 1-ին խումբ քանակ %	Հետազոտական 2-րդ խումբ քանակ %	Հետազոտական 3-րդ խումբ քանակ %	Համեմատական խումբ քանակ %
Բարձր	12	11	14	10
Միջին	41	38	40	41
Ցածր	47	51	46	49




Տրամագիր 1. Հետազոտական և համեմատական խմբերում ընդգրկված սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները հետազոտության հաստատող փուլում

Մեր հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտության հաստատող փուլում ճանաչողական բաղադրատարրը բավականաչափ հաճախ է ունեցել **զարգացման միջին և բարձր մակարդակ**:

Թիվ 3 աղյուսակում և 2 տրամագրում արտացոլված են հետազոտական և համեմատական խմբերում ընդգրկվածների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները հետազոտության վերջում:

Հետազոտական և համեմատական խմբերում ընդգրկված սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները հետազոտության վերջում

Մակարդակներ	Հետազոտական խումբ 1 (%)	Հետազոտական խումբ 2 (%)	Հետազոտական խումբ 3 (%)	Համեմատական խումբ (%)
Բարձր	41	45	46	13
Միջին	37	32	39	43
Ցածր	22	23	15	44



Տրամագիր 2. Հետազոտական և համեմատական խմբերում ընդգրկված սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության մակարդակները հետազոտության վերջում

Առանձին առանձին ներկայացված են նաև հետազոտական երեք խմբում և համեմատական խմբում սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորվածության շարժընթացը:


